

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աւելի լաւ է բարի ընկերներու հետ վշտանալ կռուել, քան թէ չար ընկերներու հետ հաճելի ու հեշտալի վայելքներ ըմբռնել: Առաջինը մահէն փրկող է, իսկ երկրորդը՝ մարմինն ու հոգին անողորմ դահիճ: Եթէ մէկը ընկերանայ չարերու հետ, կա՛մ պիտի համաձայնի անոնց, կա՛մ պիտի հակառակի: Եթէ համաձայնի՝ ինքն ալ չար կը դառնայ, իսկ եթէ հակառակի՝ անոնց թշնամին կը դառնայ: Ուստի մարդ միշտ զգոյշ պիտի ըլլայ կենցաղավարութեան մէջ, որպէսզի չըլլայ թէ ընկերակից ըլլայ չարերուն, որովհետեւ ընկերանայը դիւրին է, բայց հեռանայր դժուար:

«Որդեակ, մի՛ նախանձիր չար մարդոց. եւ մի՛ ցանկար ապրիլ անոնց պէս» (Առակ. 24.1)

«Իրենց գործերէն պիտի ճանչնաք զանոնք: Միթէ փուշէն խաղող կը քաղէ՞ն կամ տատասկէն՝ թուզ:» (Մատթ.7.16): Վերջ

ԵՐԲ Կ՝ՈՒՁԵՍ ՈՐ ՏՈՒՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐ ՀՆՈՒԹԵԱՄԲ ՕՐ ՀՆՈՒԻ ԿԱՐԴԱՅ ՍԱՂՄՈՍ 127

Եթէ Տէրը ինք չընէ տունը, զուր տեղ կը յոգնին գայն շինողները. եթէ Տէրը ինք չպահպանէ քաղաքը, զուր տեղ կը հսկեն պահապանները: Առանց Տիրոջ, զուր տեղ է որ կանուխ կ'արթնանաք եւ գիշերը ուշ հանգիստի կ'անցնինք՝ տառապանքով հաց մը ուտելու համար: Տէրը ինքն է որ քուն կը պարգեւէ իր սիրած մարդուն: Տէրը իբրեւ ժառանգութիւն՝ որդիներ կուտայ, իբրեւ վարձատրութիւն՝ գաւակներ կը պարգեւէ: Կարդանք ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԻՆ:

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝
ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Պերլինի մերձակայ շրջաններէն մէկուն մէջ բնակող աղջիկ մը կը գրէ. «Պէտք է խոստովանիմ, որ զիս Աստուծոյ կողմը քաշողը ո՛չ թէ սէրն է, այլ՝ վախը: Մարմինս կը սարսուայ, երբ կը մտածեմ Անոր դատաստանին մասին: Երբ անգամ մը կարդացի՝ «Սարսափելի բան է Կենդանի Աստուծոյ ձեռք իյնալը» (Եբր 10.35), հասկցայ՝ որ այդ ճշմարտութիւնը ինծի ուղղուած է: Կը կարծեմ, որ Աստուծոյ չհաւատացողը աւելի լաւ վիճակի մէջ կը գտնուի, քան ես: Անգամ մը նոյնիսկ գուշակուհիի մը դիմեցի, գիտնալու համար՝ թէ արդեօք պիտի չհիւանդանամ, եւ ե՞րբ կրնամ ամբողջապէս նուիրուիլ Փրկչին, քանի որ հոգիս հանգստութիւն կ'ուզէ:


Արդեօք Սատանային գործը չէ՞ ատիկա: Հոգին կը ձգտի Աստուծոյ, իսկ Սատանան կը շնչայ. «Գուշակին քով գնա եւ հասկցիր՝ թէ ե՞րբ պիտի գայ ժամանակը»: Ահա այսպէս Սատանան կը յափշտակէ Աստուծոյ ընծայուելու հնարաւորութիւնը, եւ մարդու կեանքը կ'իյնայ դեւերուն ձեռքը: Ի՛նչքան խորամանկ է սատանան:

Ուրիշ նամակի մը մէջ կը կարդանք. «Ամուսինիս ծնողքը առաջ յաճախ կ'այցելէին հաւատացեալ ընտանիք մը: Անակնկալօրէն այդ հանդիպումներուն վերջ տուին»...

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՈՒՄ ԵՌԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ս., 119.105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 19 ՕԳՈՍՏՈՍ, 2012 ԹԻՒ 34

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ
ԱԻԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
1.39-56

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Զաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ. - Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ օրհնեա՛լ է գաւակը՝ որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջ մայրը ինծի կ'այցելէ, որովհետեւ երբ ողջոյնը լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ քեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի ըսուածները պիտի կատարուին:

Մարիամ ըսաւ. «Տէրը պիտի գովաբանեմ. Ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծոյ, իմ Փրկիչովս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեղուցիւնը: Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինծի, քանի հզօրն Աստուած ինծի համար մեծամեծ գործեր կատարեց. սուրբ է անունը անոր: Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ: Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ, ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով: Գահազրկեց արքաները եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները բարիքներով լիացուց, մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց: Պաշտպան եղաւ իր ծառային՝ Խորայէլի, հաւատարիմ մնալով իր ողորմութեան, ինչպէս որ խոստացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի եւ անոր գաւակներուն:

Մարիամ Եղիսաբէթի մօտ շուրջ երեք ամիս մնայլէ ետք վերադարձաւ իր տունը:

ԱՌԱԿՆԵՐ

Եթէ այսպէս քիչ մը բնամաս, քիչ մը հանգչիս, քիչ մը մրափես, քիչ մը ձեռքերդ կուրծքիդ ծալլած մնաս, ահա այն ատեն աղքատութիւնը չար ուղեւորի մը նման քեզ պիտի դիմաւորէ եւ չքաւութիւնը ժիր սուրհանդակի մը նման դրանդ առջեւ պիտի կանգնի:

Բայց եթէ դուն եւս աշխատասէր ըլլաս, ամառդ աղբիւրի նման քեզ պիտի ողջունէ եւ չքաւորութիւնը չար մարդու մը պէս ինքզինք պիտի հալածէ:

(Առակ 6.10-11)

Ս. ՅՈՎԱԿԻՄԻ ԵՒ ԱՆՆԱՅԻ

Յովակիմ եւ Աննա, պանծալի եւ գովելի, մարդացեալ հրեշտակներ են եւ պարծանք մաղկային ազգին: Անոնք Աստուծոյ կողմէ ընտրուեցան ծնողքը ըլլալու Աստուածորդիին ծնողքին, եւ իրական նախահայրը եւ նախամայրը տիեզերքի Փրկիչին:

Աստուած ուզեց, որ նախ Յովակիմ եւ Աննա անգաւակ մնան՝ որպէսզի ծերութեան եւ ամուլութեան մէջ հրաշագործէ անոնց հրաշալի գաւակ մը՝ սահմանուած իր Միածինը ծնելու:

Յովակիմ եւ Աննա բարեպաշտ, հաւատացեալ եւ միշտ Աստուծոյ ապաւինելով կ'աղօթէին: Օր մը աղօթքի ատեն Աստուծոյ հրեշտակը երեւցաւ Աննային եւ ըսաւ. «Աննա՛, Աննա՛, Աստուած լսեց քու աղօթքդ, եւ ասա պիտի յղանաս եւ պիտի ծնանիս մանուկ մը, եւ անոր անունը պիտի տարածուի համայն երկրի վրայ»:

Աննա ըսաւ. «Կենդանի է իմ Տէր Աստուածս: Եթէ գաւակ մը ծնանիմ, գայն Աստուծոյ պիտի ընծայեմ՝ Սամուէլի մօր՝ Աննայի նման եւ իմ գաւակս ալ Աստուծոյ տաճարին պաշտօնեայ պիտի ըլլայ իր կեանքի բոլոր օրերուն»:

Աստուծոյ հրեշտակը անոր ամուսինին քով ալ իջաւ եւ ըսաւ անոր. Յովակիմ, Աստուած լսեց քու աղօթքդ: Գնա՛ տունդ: Քու կիներ Աննա պիտի յղանայ, եւ ձեզի եւ ամբողջ երկրին ցնծութիւն պիտի ըլլայ:

Երբ լրացան օրերը, շնորհանուն Աննա ծնաւ իր մանուկը՝ շնորհալի դուստրը եւ անունը կոչեց Մարիամ, որ կը նշանակէ բարձրութիւն, տիրութիւն, լուսապայծառ, աստղ ծովու, եւ եւայլն, որոնք լաւ կը յարմարին մեր տիրամօր:

Երբ մանուկը երեք տարեկան եղաւ, Յովակիմ եւ Աննա առին Մարիամը եւ տարին Տիրոջ տաճարը եւ ընծայեցին Աստուծոյ՝ ըստ իրենց ուխտին, եւ դրին զինք Աստուծոյ պաշտամունքին մէջ՝ ուրիշ կուսաններու հետ՝ որոնք կը բնակէին տաճարի կուսաստանին մէջ ըստ ականդութեան, Մանուէլի դուստրին՝ Աննա մարգարէի դաստիարակութեան տակ:

Բայց քանի որ կոյսին տարիքը բաւարար չէր ուրիշներու հետ բնակելու համար, քահանայապետը ծնողքին ըսաւ՝ որ տանին տունը եւ անբծութեամբ պահեն, եւ երբ եօթը տարեկան ըլլայ՝ բերեն եւ դնեն նոյն կուսանոցին մէջ: Եւ այնպէս ըրին:

Այնուհետեւ Մարիամ որպէս Հոգեդէն Սերովբէ, եօթը տարի եւս ապրեցաւ կուսաններուն հետ եւ ապա, ըստ Աստուծոյ տնօրինութեան նշանուեցաւ Յովսէփ արդարի հետ եւ տասնհինգ տարեկանին ծնաւ անարատ կուսութեամբ աշխարհի Փրկիչը, Յիսուս՝ որդի Աստուծոյ:

Իսկ Աստուածածնի ծնողքը՝ Յովակիմ եւ Աննա, խոր ծերութեան մէջ կանչուեցան առ Աստուած:

Սովորական կարծիքը այն է՝ թէ Յովակիմ Աննայէն առաջ վախճանեցաւ, եւ Աննա արժանի եղաւ տեսնելու թողը՝ ՅիսուսՔրիստոսը աստուածորդին՝ մարմնապէս, եւ Փրկիչի մանկութեան օրերուն վախճանեցաւ եւ թաղուեցաւ իր ամուսինին գերեզմանը՝ Գեթսեմանիի ձորին մէջ:

Յովակիմ եւ Աննա յատուկ տօն ունին, որ այս տարի կը զուգադիպի 21 Օգոստոսին:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԵՐԳՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Երեք տեսակ երգում կայ. առաջինը վկայական կը կոչուի, երբ կ'ըսեն.՝ Աստուած վկայ է. ասիկա չափազանց սուկալի է, որովհետեւ երկնի եւ երկրի Արարիչին անունը, սուտ բաներու համար վկայ կը կոչեն, մինչդեռ գիտեմք որ թագաւորի կամ իշխանի մը անունը յիշողն իսկ մահապարտ է:

Երկրորդ ուրացական երգումն է, երբ կ'ըսեն.՝ գԱստուած ուրացած է եւ թէ՛ ասիկա անոնցմէ է [հիմա՛ աստուածուրաց է]. մեծ անօրէնութիւն է երբ մէկը իր բերնով գԱստուած կ'ուրանայ, որովհետեւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս ըսաւ. «Ան որ ուրանայ զիս մարդոց առջեւ, ես եւս պիտի ուրանամ զայն Հօրս առջեւ որ երկնիմէն է» (Մատ. Ժ. 33): Ասոր համար Ս. Բարսեղ իր կանոններուն մէջ կ'ըսէ. «Եթէ մէկը երգնու ուրացութեամբ, 15 տարի թող ունկնդիրներուն հետ մնայ, տարի մը՝ դրան մօտ եւ ապա հաղորդուի» (Կանոն Է.):

Երրորդ խոստովանողական երգումն է, երբ կ'ըսեն. «Կ'երգնում Աստուծոյ փառքին, որ այսպէս է», կամ՝ «Խաչին ու Աւետարանի փառքին»:

Արդ, քրիստոնեան երբ պարտաւորի երգում ընել, եւ եկեղեցի երթալով քահանային միջնորդութեամբ հաստատուի որ արդարացի է՝ Հոգիի շահ կայ կամ արիւնի փրկութիւն, այն ատեն կը թոյլատրուի վկայութեան այս երգումը, թէեւ այս մէկը եւս ապաշխարութեամբ կ'ըլլայ:

Անոնք որոնք սովորաբար սուտ եւ իրաւ՝ փողոցներու ու հրապարակներուն վրայ Աստուծոյ ահաւոր անունը գուր տեղ կը յիշեն, այնպիսիները եթէ ետ չդառնան չար սովորութեանէն՝ մեծ, սաստիկ ու դառն պատիժ պիտի կրեն Աստուծոյ արդար դատաստանին օրը:

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ

Անիկա ջուրի ճամբաները տնկուած ծառի պէս պիտի ըլլայ, որ իր ժամանակին իր պտուղը կուտայ: (Մադ. մոս 1.3):

Աստուածապախ մարդիկ Աստուծոյ Խօսքին մէջ նմանցուած են գետերու եզերքը տնկուած առողջ ծառերու, որոնք առատ պտուղ կ'արտադրեն եւ շատ տերեւ ունին: Պտղատու ըլլալու համար հաւատացեալները պէտք է.՝

Ա) Ամբասիր նկարագիր ունենան: Մարդիկ կը սիրեն տեսնել անհատներ որոնց նկարագիրը պարկեշտութիւն կ'արտայայտէ եւ որոնց կեանքը արատաւորուած չէ մեղքով:

Բ) Զօրաւոր ըլլան: Անոնք որոնք քաջածանօթ են Աստուծոյ Խօսքին ճշմարտութիւններուն, զօրաւոր կ'ըլլան կեանքի դժուարութիւններուն եւ փորձութիւններուն մէջ:

Գ) Աճումի ընթացքին մէջ գտնուին: Ինչպէս առողջ ծառը կ'աճի եւ իւրաքանչիւր տարի շրջանակ մը կ'աւելցնէ իր բունին վրայ, նոյնպէս ալ հաւատացեալներ պէտք է աճին Տիրոջ շնորհքին մէջ (Բ. Պետ. 3.18):

Դ) Օրհնութեան միջոց ըլլան ուրիշներու: Կարգ մը ծառեր ուտելիք կը հայթայթեն, ուրիշներ շուք կուտան, ոմանք ալ որպէս փայտ գործածուելու կը ծառայեն: Հաւատացեալներ պէտք է հոգեւոր սնունդ, մխիթարութիւն եւ քաջալերութիւն հայթայթեն իրենց շրջանակին:

Ե) Պատրաստ ըլլան տեղափոխուելու երբ Աստուած կանչէ: Մենք սահմանուած չենք երկրի վրայ մնալու: Մենք կը սպասենք որ հասնի ժամանակը երկինքի պարտէզին մէջ տնկուելու:

Արդեօք ի՞նչ տեսակ ծառ մըն ես դուն: Քննէ՛ անձը, ապա խնդրէ՛ Աստուծոյ՝ որ քեզ պտղատու ծառ մը ընէ իր փառքին համար:

ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔԷՆ

11.30--12.4

Արդար գործերու վարձքը կեանք է-
անօրէնները վաղահասօրէն պիտի
կորսուին: Երբ արդարը հագիւ կը
փրկուի, ի՞նչ պիտի ըլլայ ամբա-
րիշտին ու մեղաւորին վիճակը:

Գիտութիւն սիրողը իր սխալները
կ'ընդունի. յանդիմանութիւն ատողը
անմիտ է: Լաւ մարդուն Տէրը
չնորհք կու տայ, մինչ կը դատա-
պարտէ չարամիտը: Չարութիւնը
մնայուն յաջողութիւն չի բերեր,
մինչ արդարներու արմատը ո՛չ ոք
կրնայ շարժել: Առաքիւնի կին մը
ամուսինին համար թագ է, մինչ
անպատիւ կինը անոր ոսկորները
կրծող քաղցկեղի կը նմանի:

ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

2.10-13

Երգէ՛ եւ ուրախացի՛ր, Երուսաղէմ,
Սիոնի աղջիկ, որովհետեւ ասա ես
կու գամ քու մէջը բնակելու համար,
կ'ըսէ Տէրը:

Այն օրը բազմաթիւ ազգեր Տիրոջ
պիտի ապաւինին եւ իր ժողովուրդը
պիտի ըլլան, եւ ինք քու մէջը պիտի
բնակի: Այն ատեն պիտի գիտնաս
թէ ամենակալ Տէրը զիս ղրկեց քեզի:
Սուրբ երկրին մէջ Տէրը Հրէաստանը
պիտի առնէ որպէս ժառանգութիւն
եւ կրկին Երուսաղէմը պիտի ընտրէ
որպէս բնակութիւն:

Տեսէք Տէրը եւ լռեցէ՛ք, ով մարդիկ,
որովհետեւ անիկա դուրս եկաւ իր
սուրբ բնակութենէն:

Շարունակել Աստուածաշունչէն

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱՍԱԿԸ

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ

6.16- -7.1

Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ
տաճարին եւ մեհեաններուն մի-
ջեւ:

Արդարեւ, մենք ենք կենդանի
Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստ-
լած ինք ըսաւ.- *«Անոնց մէջ պիտի
բնակիմ եւ անոնց հետ պիտի
ապրիմ: Ես իրենց Աստուածը
պիտի ըլլամ եւ անոնք՝ իմ
ժողովուրդս»:* Ահա թէ ինչո՛ւ Աստ-
լած կը հրահանգէ մեզի.- *«Անջատ
եւ հեռու կեցէ՛ք հեթանոսներէն.
պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես
ծեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի
հայր պիտի ըլլամ եւ դուք իմ
տղաքս ու աղջիկներս պիտի
ըլլաք,- կ'ըստ ամենակալ Տէրը»:*

Սիրելիներ, այս խոստումները
մեզի եղած են: Ուստի հեռո՛ւ
մնանք մարմնական եւ հոգեկան
ամէն պղծութենէ, մենք մեզ
կատարելապէս մաքրենք՝ Աստու-
ծոյ երկիւղովը ապրելով:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑՄԱՆՈՒԹԻՒՆԸ
ՄՍՏՈՒՄԾԱՇՈՒՄԶԷՆ:**